



ԱՐԵՎՈՐԻԿԻ

## ԱԻԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ԱՐԵՎՔՈՒՐԻԿ

Երրորդ դասարանցիների  
մայրենիկ գիրք-տեսքը  
առաջին մաս

Նկարիչ՝ Գոհար Սանոյան

ԵՐԵՎԱՆ 1994  
«Շաղիկ»

Սիրելի՝ բարեկամ,

քո հասակավիցներից շատերը լավ բարեկամություն են անում «Արևուրիկի» հետ։ Կարծում եմ՝ դու էլ կսիրես այն։ «Արևուրիկում» կկարդաս հետաքրքիր ստեղծագործություններ, լրագրեր կատեղծես, հեռազրեր կուղարկես ու նամակներ կգրես քո ծանոթ հերոսներին, լեզվական խաչքառեր ու գլուխկոտրուկներ կլուծես ու էլի շատ ու շատ հետաքրքիր գործեր...

Հաջողություն քեզ և իմ բարեմաղթանքները։

Արդա Պետրոսյան

## ԲԻՇԱՋԱՐԴԱՆ

Եղանձու պատճեն  
պատճենագործ միջնադար  
ուսն օվկանու

Մարտին Ղազարյան

# ԹՇՎՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ


## Հովհաննես Թումանյան

Ես ապրում էի մի փոքրիկ տան մեջ՝  
Ազատ ու անփուլք,  
Աշխարհըն ինձ համար կլոր էր անվերջ,  
Կեղեր՝ կապույտ:

Նրանից հետո աչք բաց արի  
Մի փոքրիկ բնում,  
Տեսա՝ աշխարհը հարդից է շինած,  
Ու մայրս է շինում:

Մի օր էլ, բնից գլուխս հանած,  
Նայում եմ դես-դեն,  
Տեսնեմ՝ աշխարհը տերնից շինած,  
Սեր բունք՝ վրեն:

Հիմի թռչում եմ հեռո՛ւ, շատ հեռո՛ւ,  
Ամեն տեղ գնում,  
Բայց թե աշխարհը ինչից է շինած,  
Էլ չեմ հասկանում:










անփուլք - անհրաժեշտ, անտարբեր, անուշադիր, թափաթիված

### Բանաստեղծությունը պատմի՞ր:

मात्र विषय एवं विधि विवरण

Նկարի՛ր բանաստեղծության բառատողերը, յուրաքանչյուրի մուգրի՛ր՝ համապատասխան բառատողը:



Քո կարծիքով՝ ինչի՞ց է շինված աշխարհը:

Նկարագրի՛ր ձեր թաղամասը (թաղը, փողոցը):

Ինչպիսի՞ն կուզեիր, որ մեր բաղարք լիներ:

Թոշունին նամակ գրի՛ր: Զմոռանաս հասցեն գրել:

Առավոտյան բարեմադրություններ գրի՛ր:

Հայության պատմությունը կազմակերպվել է առաջարկած համապատասխան աշխատանքներով:

Առաջարկը կ բարելավագություն պահպանության և աշխատանքի արդյունավետության մասին:

Եթե դուք անձնագիր ունեք, ապա այն պահպանության մասին աշխատանքը կ լրացնել առաջարկած աշխատանքներում:

Եթե դուք անձնագիր չունեք, ապա աշխատանքը կ լրացնել առաջարկած աշխատանքներում:

Վեհապետական աշխատանքը կ լրացնել առաջարկած աշխատանքներում:

Եթե դուք անձնագիր ունեք, ապա աշխատանքը կ լրացնել առաջարկած աշխատանքներում:

Մի անգամ մի մարդ հյուր է գնում բնկերոց տուն: Ու տում է, խմում, իրիկնադեմին վեր է կենում, որ տուն զնա: Մեկ էլ նայում է տեսնո՞մ՝ երկինքը տրաքեց, ու մի անձրի սկսեց, ոնց որ ջրինդեղ:

- Պահո՞ւ, Էս ի՞նչ փորձանք էք, ո՞նց եմ տուն գնալու, - ասում է էս հյուրը:

Տանտերը տեսնում է, որ ճար չկա, ասում է.

- Լավ, այ ընկեր, Էս անձրեին ո՞նց հս գնալու տուն, զիշերը մեր տանը մնա, Էլ ո՞ր օրվա ընկերներն ենք:

Վերջը հյուրը համաձայնում է:

Տանտերն ու կինը գործով են ընկնում: Մեկ Էլ նայում են տեսնո՞մ՝ հյուրը չկա:

Բիշ ժամանակ անց մեկ Էլ էս հյուրը թթված, ջուր դարձած, ներս մտավ:

- Այ մարդ, տունդ շինվի, Էս անձրեին ո՞ւր էիր զնացել:

- Գնացի՞ տնեցիներին տան, որ անձրեի պատճառով զիշերս ձեր տանն եմ մնալու:

Չաշ - հիմար, միամիտ

զիշերս - այս զիշեր



Փորձի՛ր բացատրել այս արտահայտությունները:

երկինքը տրաբեց \_\_\_\_\_

Ճար չկա \_\_\_\_\_

գործով են ընկնում \_\_\_\_\_

ջուր դարձած \_\_\_\_\_

Հերիաթից դո՛ւրս գրիր այն նախաղասությունը, որով կարող ես  
ապացուցել հյուրի շաշ լինելը:

Շաշ հյուրին նոր տարին տոնելու հրավիրի՛ր, բայց զգուշացրո՞ւ...

Շաշ հյուրը հեռացիր է ուղարկում տուն:

Ականջիղ օդ արա՞:

Գղակը՝ մեծ, տակը՝ դատարկ:

Ինչ լինի մարդուն՝ իր խելքից է:

# ԽՍԱԾ ՄԿԱՆ ՊԱՅՄԱՆԸ

Հայ ժողովրդական հերիտաժ

Մի զիմ մուկ վախսում է մառան, ելնում նստում գինու կարասի պոնկին, իոտ է քաշում թե չէ, բեֆը լավանում է, ընկնում է ուղիղ գինու մեջ: Խեղճ մուկը, խեղճվելով, աղաչում է Աստծուն.

- Աստված ջան, Էս ի՞նչ կրակի մեջ զցեցիր ինձ: Հիմա սս էս հսկա կարասի մեջ պիտի խեղճվե՞մ: Ուրեմն սս մի կատվի բաժին էլ չարժե՞մ: Լավ չէ՞ր կատուն ինձ ուտեր, քան թե անտեղի կորչեր էս կարասի մեջ:

Եղ ասելն էր, որտեղից-որտեղ մի չալ կատու է հայտնվում ու կարասի պոնկից ձայն տալիս.

- Հիմա որ քեզ կարասից հանեմ, կթողնե՞ս քեզ ուտեմ:

- Ո՞ւր է, Ե՛: Եղպիսի մի լավություն արա, որ լավության տակից դուրս կգամ:

Կատուն թաթը գցում է, մկանը կարասից հանում, դնում է մի կողմ, որ մի քիչ չորանա:

Մուկ դու մուկ, պո՛ւկ, փախչում է, մտնում ծակը: Կատուն վիզը ծռում է, նայում է, նայում ու ասում.

- Բա ի՞նչ եղավ մեր ուտքը պայմանը:

- Դու Ել քան ասիր, խմած ժամանակ մի քան Եր ասինք, կրակն ընկա՞մ:

Պառունկ - եղբ, ծայր, շուրթ, բերան



Հերիաթն այնպիս պատմի՞ր, կարծնս մուկը դու ես:

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

Ինչպիսի՞ն է այս հերիաթի կատուն:

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

Հերիաթից դո՞ւրս գրիր այն հատվածը, որտեղ մուկը հուսահատված է:

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---


---

---

---

Ինչպիսի՞ն է այս հերիտաժի մուկը:

Նկարի՞ն նրան՝ կարասում խնդրվելիս:



Կատվի ու մկան մասին ինքդ հանհլուկ հորինի՞ր:

---

---

---

---

---

Մուկը կատվին ինչպե՞ս խնդրի, որ իրեն չուտի:

---

---

---

---

---

---

---

---

Ինչպիսի՞ն է այս հերիտաժի մուկը:

Նկարի՞ո սրան՝ կարասում խեղդվելիս:

1000

Կատվի ու մկան մասին ինքդ հանելուկ հորինի՛ր:

11. *Two paragraphs—writing day*

---

---

---

---

---

---

---

---

Մուկը կատվին ինչպե՞ս խնդրի, որ իրեն չուտի:

## ԵՇԻ ԶՈՒՆ

Հայ ժողովրդական հերիտաժ

Մի հալիքոր գնում է քաղաք, տեսնում շուկայում ձմերուկ և ն վաճառում, մոտենում է, թե՝

- Արագերացու, էս ի՞նչ է:

Ձմերուկ վաճառողը տեսնում է, որ էս ծերը միամիտ մարդ է, ձեռ է առնում.

- Էշի ձու:

Էս հալիքորը մտածում է. «Մեր էշը սատկել է, մի հատ առնեմ տանեմ, ի՞նչ կլինի»: Առնում է տանում: Ճամփին նստում է՝ մի թիշ հանգստանա, շունչը տեղը բերի, էս ձմերուկը գլորվում է, գնում մի քարի դիպչում, ջարդվում: Գու մի ասի, էդ քարի տակ մի նապաստակ է թարնված լինում, դուրս է զալիս քարի տակից ու, պո՛ւկ, փախչում: Խեղճ հալիքորը ետնից վազում է ու ձայն տալիս.

- Քուսի՛-քուսի՛, քուսի՛-քուսի՛...

Նապաստակը փախչում է գնում: Էս մարդը փոր-փոշման տուն է գնում, կնոջը պատմում.

- Բա, ա՛յ կնիկ, զիխիս էսպիս փորձանք եկավ: Մի էշի ձու առա, ճամ-



փին գլուրվեց, բուռակը դուրս եկավ, փախտված: Խնչրան վապեցի, շիտաւ: Ենպիս էր վազում, ոնց որ նապաստակ: Ափսոս, կպահեինք, կմեծանար, ձմեռվա համար փայտ կրերեինք:

Կինն ասում է.

- Այ մարդ, իետո կթողնեի՞ր կժերը վրան դնեի, գնայի աղբյուրից ջուր բերելու:

Ես մարդը կնոշը մի լավ ծեծ է տալիս թե՝

- Ես գնամ խեղճ էշին փայտ բարձիմ-բերիմ, դու էլ հոգնած-դադրած էշին տանես ջո՞ւրը...

հալիվոր - ծեր մարդ

դադրած - հոգնած

**Հերիաթում այս նախադասություններն ինչպե՞ս են ավարտվում:**

Մի հալիվոր գնում է բաղար.

Դու մի ասի, Էղ բարի տակ

Ճամփին նստում է՝


Ինչպիսի՞ մարդ էր այս հերիաթի ծերունին, մի քիչ նրա մասին պատմի՞ր:

**Հերիաթի ո՞ր հատվածներում է նրանում, որ նա ինչ այդպիսին է:**

Ականջիղ օդ արա:  
Եշի բեռն ինչքան ծանր լինի, այնքան թեթև կգնա:

Եշի ականջում բնածր  
Հերիաթ

Գրածութեան անձնագիրը:




**h u**

k z b p h l p w q h p

# ԿՈՒՅՈՒՆԻ ԿԱՐԾԻՔԸ

Հովհաննես Թումանյան

Օքը ցերեկով  
Երեք-չորս հոգով  
Կույրերը եկան,  
Փղին դեմ ընկան:  
Մինը, որ մարմնին դիպավ հաստ, ահեղ,  
- Հե՛յ, զգո՞ւյշ,- կանչեց,- մի պատ կա էստեղ:  
Մյուսը, որ ոտն էր շոշափել իր դեմ՝  
- Ի՞նչ պատ,- ծիծաղեց,- էս կոճդ է կարծեմ:  
Երրորդի ձեռը կնձիթն էր ընկել.  
- Օձ է, օձ,- գոռաց,- էլ ի՞նչ եր կանգնել:  
Մինչդեռ չորրորդը, պոչիցը բռնած,  
Բահ-բահ խնդալով ծաղրում էր նրանց.  
- Վա՛հ, ճիշտ որ կույր եք. չիմացավ ոչ ոք:  
Ո՛չ էս է, ո՛չ էն, այլ կախած մի թոկ:  
- Զէ՛, պատ է, - չէ՛, կոճդ - չէ՛, օձ է, - չէ՛, թոկ...  
Ու աղմկելով ամեն մինը ջոկ.  
Ինչպես որ եկել,  
Դեմ էին ընկել,  
Ենպես էլ կույր-կույր ետ դարձան կրկին.  
Սարի պես փիղը պարզ լուսի տակին:



- |           |                                |
|-----------|--------------------------------|
| դեմ առնել | - հանդիպել, դեմք դուրս գալ     |
| կոճղ      | - ծառի բնից սղոցած մաս         |
| թոկ       | - պարան                        |
| շոկ       | - առանձին                      |
| ահեղ      | - ահավոր, հպոր, ահարկու, զորեղ |

## Կարճ պատմի՛ք:

## Կույրերի կարծիքը

Կույրերը հանդիպել են ի՞նչում. ի՞նչ կասեն:

Կույրերին որևէ բան այնպես նկարագրիր, որ իմանան խոսրն ինչի մասին է:

Աշնան օրերն են հասել.  
Իջել է ամպը սարին,  
Եվ իրամեշտ է սաել  
Կոռոնկը մեր աշխարհին:

Բարդին էլ չի տսափում  
Արագիլի թևի տակ,  
Դեղին թերթեր է թափում  
Առվակի մեջ կապուտակ:

Կարմիր խարոյկ է կարծես  
Ծեր տանձենին տնտառի,  
Ռվում է, թև մոտ վազես,  
Չեռ ու ուժը կվատի:

Բամին շատ էր թափառել՝  
Պարապ-սարապ, թևը կախ,  
Բայց արդեն գործ է ճարել,  
Տեսեք, ինչքան է ուրախ:

ՄԱՍԱՓԻԵԼ - խշխշալ, կամաց խշշալ  
ԹԵՐ ԿԱԽ - տիսուր, տրտում, հուսահատ



Դրի՞ն քեզ դուք եկած քառասուղի և նկարի՞ն:

Այս տողերը փորձիր բացատրել:

## Բարդին էլ չի սուսպիռ

Արագիլի թերի տակ...

Կարմիր խարույկ է կարծես  
Ծեր տանձենին անոստի...

Աշնան մասին պատմի՞ր՝ զործածելով բանաստեղծության բառերն ու արտահայտությունները:

Աշնան տերևաթափ ծառ նկարի՞ր և նրա մասին պատմի՞ր:

A faint, light blue map of the world showing coastlines and major rivers. The map is centered on the Atlantic Ocean, with Europe and Africa visible on the left and North America and South America on the right. The oceans are a very light blue, while landmasses are a slightly darker shade. Major rivers are depicted as thin blue lines originating from land and flowing towards the coastlines.

---

---

---

# ՀԻՆԳԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

## Չանի Ռողարի

- Օգնեցե՞ք, օգնեցե՞ք - զռալով լեզապատճառ փախչում էր Հինգը:

- Ի՞նչ է եղել:

- Մի՞թե չեր տեսնում: Հանումն ընկել է հետեիցս: Թե որ հասալ՝ կորած եմ:

- Դու էլ բա՞ն ասացիր՝ կորած եմ:

Բայց փորձանքը պատահեց: Հանումը հասալ Հինգին և սկսեց սրով կտրատել նրան: (Սուրբ «Ժանում» նշանն էր): Ո՞նչ օրն ընկալ մեր հինգը... Դեռ յավ էր, որ այդ պահին նրանց կողքով անցավ արտասահմանյան մի երկար մերենա՝ այսպան երկար: Հանումը մի վայրկյանով շուրջ եկալ, որ տեսնի՝ կկարողանա՞ղ դրան Էլ կարծացնել: Հինգ դու Հինգ, պո՛տ, փախավ մտավ կողքի շենքի մուտքը: Միայն թե նա արդեն ոչ թե Հինգ էր, այլ Զորս, այն Էլ՝ բիբը ջարդած:

- Ես ի՞նչ է եղել թեկ: Խոի՞վ ես արել:

- Վա՛յ, գլուխներդ պատեր, թե կարող եք:

Այս ի՞նչ ձայն էր: Հա՛, Բաժանումն է: Գօքախտ Զորսը մի կերպ «Բարի երեկո» շշնչաց ու փորձեց ծիկել: Բայց որի ու տես, որ Բաժանումն ավելի ճարպիկ դուրս եկավ ու մկրատի մի շարժումով՝ շըխկ, Զորսին ուղիղ երկու կես արեց՝ Երկուս և Երկուս: Երկուսներից մեկին դրեց գրպանը, իսկ մյուսը պահը չկորցրեց, դուրս վագեց փողոց ու իրեն զցեց արամվայ:

- Դեռ մի բոպե առաջ ես Հինգն էի, - լաց եր լինում Երկուսը, - իսկ հիմա տհսեր, թե ինչի՞ եմ նման:

Տոմսավաճառը մրժմրթաց.



- Ես խեղճուկրակներն լլ որ տրամփայ չեն նստո՞ւմ, ասո՞ւ ուրով գնացեք, Ելի՞:

- Ես մեղք չունեմ: Ես մեղավոր չեմ, - բացականչեց Երկուսը:

- Բա չէ՛, բերիս Եւ մեղավոր: Բոլորն լլ Եղ են ասում:

Հենց առաջին կանգառում Երկուսը տրամփայից իջավ : Ո՞նց Եր կարմրել իսկը կարմիր բազուկ: Բայց ահա... Ելի մի փորձանք, ինչ-որ մեկի ոտքն Եր տրորել:

- Օ՛, ներեցեք, տիկի՞ն:

Իսկ տիկի՞նը ոչ մի կաթիլ Էլ չեր բարեկացել, ընդհակառակը առւյնիսկ ժպտաց: Մի տես, Է՛, տիկին Բազմապատկումն Եր: Նա շատ բարի սիրտ ուներ և շատ Եր խղճում նրանց, ովքեր վատ դրության մեջ Եին լինում: Բազմապատկումն իսկույն բազմապատկեց Երկուսին Երեքով, և մի երաշալի թիվ՝ Վեց ստացվեց: Ինչու երաշալի՞ն: Որովհետև դա Հինգին գումարածն է: Ոչ մի ուսուցիչ Վեց չի նշանակում, միայն Հինգի կողքին գումարած է ավելացնում:

- Ո՞ւիս, ի՞նչ լավ Ե: Հիմա ես Հինգին գումարածն եմ:

*Հերիաթի յուրաքանչյուր հերոսի մասին համառոտ պատմիր:*

Նմուշ՝ Երկուս - ծնվել է Զորաբ երկու կես աննելուց հետո: Վախկուտ է, խեղճուկրակ:

*Հերիաթի այն հատկածը դո՛րս գրիր, որ վերաբերում է ամենաքարի հերոսին:*

Հերիաթի որնէ հատված պատմի՞ր ու վերնագրի՞ր:

При этом, если учесть, что в Европе и Азии в 1990-х годах было создано множество новых государств, то можно сказать, что в мире в целом количество государств неуклонно растет.

Նման հերիաթ հորինի՛ր, որտեղ հերոսները թվերի փոխարեն բառեր լինեն:

## ՍՈՎՈՐԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆՆԵՐ

Մի խուլ մարդ երեք այծ ուներ: Մեկի պողը կոտրած էր: Բնշպես է լինում, մի օր այծերը կորչում են: Տերն ընկնում է դես-դեն՝ այծերը գտնելու:

Նա պատահում է ուրիշ խուլ մարդու՝ վար անելիս, և հարցնում.

- Բարի հաջողում, ախաղեր, այծերս չե՞ս տեսել:

- Լավ է՝ այսպես ցանեմ, - ձեռքը մի կողմ թափ տալով պատասխանում է վար անողը:

Այծատերը կարծելով, թե դեպի ցույց տված կողմն են գնացել այծերը, ասում է.

- Թող երկինքը վկա լինի, թե զտա այծերս՝ պողը կոտրածը քեզ եմ տպու:

Ասում է ու գնում այծերը որոնելու: Այծերը գտնելով՝ նա ուրախ-ուրախ առաջն արած, քշում քերում է արտավարի մոտ և ասում.

- Շնորհակալ եմ, ախաղեր, այծերս զտա. առ այս այծս էլ քեզ, - ու



պոզը կոտրած այծը քշում է դեպի նա:

- Ես չեմ կոտրել դրա պոզը, ես տեղեկություն չունեմ, - զարմանքով ասում է արտավագը խուլը:

- Ի՞նչ ես խոսում, - ասում է այծատերը, - ես այս այծն եմ խոստացել, որ մեռնես Էլ՝ մյուս այծերից տվողը չեմ:

- ԶԵ՛, ես չեմ կոտրել, - բարկացած ասում է մեկը:

- ԶԵ՛, ես Էս այծն եմ խոստացել, - կրկնում է մյուսը:

Սա նրան, նա սրան, բանք հասնում է տուրուղմանցի: Վերջն Էլ գնում են բյոխմի մոտ գանգատ: Գյուղ չհասած՝ սրանց հանդիպում է մի պառավ կին, նույնպես խուլ և հարսի ձեռքից փախած:

- Այ նանի, - ասում է այծատերը, - իմ այծերը կորել էին, Էս մարդուն հարցրի, սա Էլ այծերիս տեղը ցույց տվեց: Պոզը կոտրած այծս տալիս եմ սրան, չի վերցնում, ես Է՞ս այծն եմ խոստացել, որ մեռնի Էլ՝ մյուս այծերից տվողը չեմ:

- Այ նանի, - ասում է արտավագը, - Էս օտարականն եկել ասում է, թե այծիս պոզը դու ես ջարդել: Թող ձեռք ջարդվի, թե ես Էդ բանից տեղեկություն ունեմ:

- Ե՛, որդիրս, ձեր արևն ապրի, - պատասխանում է պառավը, - ինչ ուզում է լինի, ես ձեր խնդիրը չեմ կարող կատարել. բանի Էն չըոտ անզգամ հարսը տանն է՝ ես Էն տունը ոտ կոխողը չեմ ու չեմ:

արտավագ

- արտ վարող

բյոխմա

- գյուղի մեծահարուստ դեկավագը, գյուղապետ

խնդիր

- խնդրանք

չըոտ

- չեղած

Հերիայի դեպքերը հերթով թվի՞ր:

1. Խուլը կորցնում է այծը:

2.

Այստեղ հերիտաժի որևէ նախադասություն նկարի ք:

Նկարեցի՞ր: Կողքինիդ տո՛ր. թող գուշակի ու գրի քո նկարած նախադասությունը: Դու չհուշե՞ս:

Ճիշտ զրե՞ց: Կեցած՝

Շարունակի՞ր՝ օգտվելով հերիաժի բառերից ու արտահայտություններից:

Մի պառակ երեք խոլոյ այծ ուներ: Մի օր պառակը կորակ:



# ՀԱՅՐ ԲՈՆԱՄԻՒ ՀԵԹԻՆՁԸ


Ֆրանսիական ժողովրդական հերիաք

Հայր Բոնամին զիտեր-չզիտեր, բնդամենը մի հերիաք զիտեք: Ամեն օր նա այդ հերիաքն էր պատմում և այնքան էր պատմել, որ անզիր էինք արեք: Հերիաքը որսորդների մասին էր և այնքան գլարձալի, որ լսողը ծիծաղից թուլանում էր:

Ահա այդ հերիաքը.

Լինում է, չի լինում, երկու որսորդ է լինում: Օրերից մի օր էս որսորդները ուվորականի պես շներն առաջն են անում ու գնում որսի: Էս շներից մեկը սատկած է լինում, մյուսի բերանումն էլ խսկի շունչ չի լինում:

Գնում են, գնում, հասնում են մի անտառի: Էս անտառում ո՛չ ծառ է,



Լինում, ո՛չ էլ՝ թուփ:

Հանկարծ դիմացի թփի տակից մի նապաստակ է դուրս գալիս, կանգնում որսորդների առաջ, բայց սրանք ոչ մի նապաստակ չեն տեսնում: Թրթիկ, թրթիկ... Կրակում են, նապաստակին սպանում, ու բախտանում: Ու շվարում կանգնում են. չզիտեն, թե ի՞նչ անեն:

- Գտա՛, - կանչում է նրանցից մեկը: - Հրե՞ն, Ե՞ն դղյակը տեսնո՞ւմ եք, այնտեղ գնանք:

Գնում են: Մոտենում են թե չեն, տեսնում են՝ դղյակի պատերի բոլոր բարերը դես ու դեն են շաղ տված, դղյակ մի ասա, մի ավերակ ասա:

Ծա՞կ, բա՞կ... Թակում են՝ դղյակի դուռը, հետև էլ գոռում՝ «Ե՞ն մարդ, դուռը բա՛ց արա, զիտինք, որ կաս, բայց եկմա եղտեղ չեն»:

Դուռը բացում է մի մորուրավոր: Արա մորուրն էնրան երկար է լինում, որ զիտին է հանում: Բայց մորուրի մեջ ոչ մի մագ չի լինում:

- Ի՞նչ եք կամենում, բարի՛ պարոններ, - հարցնում է նա:

- Մի նապաստակ ենք սպանել, ուզում ենք տապակել, բայց նապաստակ չունենք:

- Ի՞նչ եք ասում, - պատասխանում է մարդը: - Դե լով, նե՛րս համեցեք: Ես Էլ մի մեծ կաթսա ունեմ: Կաթսաս անտակ է, տակն էլ տակից պոկված է: Բայց ոչինչ, նապաստակը բերեր, կտրատենք, լցնենք մեջը: Մաի կտորները կթափվեն, մաշուրը կմնա:

Այսպիս ամեն օր, հայր Բոնամին մեզ պատմում էր իր հերիաթը. շատ պարագալի էր:

պարճակի  
շվարել  
դղյակ  
շաղ տված  
ավերակ  
բակել

- ծիծաղաշարժ, ծիծաղելի  
- մոլորել, շշմել  
- բերդ, ամրոց, ապարանք, զեղեցիկ տուն  
- ցրված, այս ու այնտեղ թափթափված  
- փլատակ, բանդիված, խորտակված կառույց (շենք)  
- ծեծել

Արտագրի՛ր, ընդգծված բառերն ու արտահայտությունները փոխարինի՛ր ուրիշ բառերով ու արտահայտություններով:

Հայր Բոնամին մի ծիծաղաշարժ պատմություն զիտեր:

Որսորդները շվարել կանգնել էին ապարանքի մոտ:

Նրանք թակեցին խորտակված դղյակի դուռը:

Սուտլիկ որսկանն ի՞նչ կասեր, եթե յսեր հայր Բոնամիի հերիաթը:

Որորդներն ի՞նչ էին ասում դուքը թակնիս:

Նապաստակն ի՞նչ ասաց, եթե կանգնեց որորդների դիմաց:

Հայր Բոնամիին կարող ես նկարագրել:

Սառն ու տար մտքեր տար ու սառը բաների մասին


Առ ա պատմություն սուտիկ բաների մասին

## Առևտասանների միության լրագիր

# ԱԳՐԱԿՆ ՈՒ ԱՌՎԵՍ

Աթարներ Խնկոյան

Բախտի բերմամբ  
Թե պատահմամբ,  
Մի մեծ ազռավ  
Մի գունդ պանիք  
Դաշտում գտավ,  
Կտուցն առավ,  
Ծառին թառավ:  
Օ՛, ի՞նչ պանիք, դեղին ոսկի,  
Բայց դեռ չառած համբ իսկի,  
Աղվեսն անցավ ծառի մոտով՝  
Գերիթեց,  
Երկեց  
Պանրի հոտով:  
Վակեց զնաց բերնի ջուրը,  
Եվ թուլացան կուռն ու ճուռը:  
Են ժամանակ իրա ձեին,



Ծառի տակից աշրն ազռավին,  
 Հեղիկ, նապիկ,  
 Փափկամազիկ,  
 Բայեց լեզուն անուշ, մեղուշ,  
 Թափեց, չափեց շաքար ու նուշ.  
 - Բնչքան լավն ես,  
 Ես քո գերին,  
 Քո էղ սեհիկ  
 Վառ աշքերին,  
 Նուրբ ծալքերով  
 Զույգ թեկերին:  
 Մի դու մտիկ,  
 Եղպես քթիկ,  
 Եղպես ձտիկ,  
 Մախմուր ագին,  
 Խաս ու դումաշ,  
 Ատլասն հազին:  
 Գիտեմ, անշուշտ, իմ քույրիկի  
 Չայնն էլ կը ի հըրեշտակի:  
 Երգի՛ր, քուրիկ, մի՛ ամաշի  
 Իմ ուզածը մի մեծ բան չի:  
 Ձեն որ շքնաղ էղ տեսքիդ հետ  
 Երգելում էլ եղար վարպետ,  
 Օ՛, կդառնաս, իմ մաքրուիի,  
 Թոշունների մայր թագուիի:  
 Ազռավ ազին, իրեն տված  
 Գովհատներից շշմած, ուռած՝  
 Ազռավային  
 Բկովը մին  
 Որ չկօռա՞ց,  
 Պանիրն ընկալ ծառիցը ցած,  
 Շողորորթը ըոխեց, զնաց:

գերգել  
 կուռ  
 ճուռ  
 հեղիկ-նապիկ  
 մեղուշ  
 ձտիկ  
 մախմուր  
 խաս  
 դումաշ  
 ատլաս  
 շքնաղ  
 մաքրուիի  
 ազի  
 բկովը մեկ  
 ըոխեց

- այստեղ՝ ինչ-որ բանով հիանալ  
 - թե, ձեռք  
 - ոտք  
 - բնրուշ, նուրբ, նապելի  
 - մեղրի նման քաղցր  
 - վիկ, պարանոց  
 - անուշ, սիրուն և հաճելի  
 - բնտիր, նաև՝ բնտիր գործվածք՝ կտոր  
 - մետարսի նուրբ կտոր  
 - բնտիր՝ նուրբ կտոր  
 - շատ գեղեցիկ  
 - շատ մաքրուր, ազնիվ մարդ  
 - մայրիկ, մայր  
 - ամբողջ կոկորդով  
 - բերանով վերցնել, թռցնել

Համառոտ պատմի՞ր «Ազուակն ու առվեսը»:

---

---

---

---

---

Աղվեսին վերաբերող հատվածները դուքս գրիր:

Ի՞նչ ասաց աղվեսը հեռանալիս:

---

Մի քիչ պատմիր ազռավի մասին:

Page 1 of 1

Ի՞նչ կպատմես պանրի մասին մի մարդու, որը երբեք պանիր չի  
տեսել:

These findings support the hypothesis that the brain's reward system is involved in the development of drug dependence.

# ՉՈԶԻԿ

Արուայակ Սահման

Մի թռչուն կա՝

Թեևը ունի,

Փետուր չունի.

Մկան նման

Ատամ ունի.



Լույսը տեսնում՝ թարնվում է,

Սութը տեսնում՝ թռչուում է:

Հանելուկ-հանմանելուկ,

Ո՞չ թռչուն է,

Ո՞չ էլ մուկ:



Մկների թագավորը իրաման արձակեց, որ բոլոր մկները՝ մեծ մկներից մինչև մուկիկ, իրեն հարկ պիտի տան:

Եկան մկները, բերին հարկերը: Մկների թագավորը նայեց, նայեց, հարկատու շղթիկին շտեսավ.

Այ թեզ խորամանկություն...

Բաց թողնված բառերը գրի՛ր վանդակներում և բնդգծված սյունակում կկարդաս ազռավի տեսակի անուն, որն ապրում է մոտ 70 տարի:

1. Բախտի ...

2. Օ՛, ի՞նչ ..., դեղին ուկի

3. Վավեց, գնաց քերնի ...

4. Ծարի տակից ... ազռավին

5. ... լեզուն անուշ, մեղուշ


6. Ինչքա՞ն լավին ես

Ես քո ...

7. Օ՛, կրաքասա, իմ մաքրուիի,  
... մայր թագուիի

8. Թե որ ... էղ տեսրիդ հետ

9. Երգեկում էլ եղար ...



Աղվեսի գնալուց հետո ազռավն ի՞նչ արեց:

- Զղիկն ո՞ւր է,
  - Ասեր՝ թող իմ հարկը թերե:
  - Զղիկը չկա:
  - Կանչեր՝ թող գա՛:
  - Զղիկն եկավ.
  - Բա ևս մո՞ւկ եմ, որ հարկ թերեմ. Էղ ո՞ր մուկը թեր ունի, - ու ցույց տվեց իր թերեր:
  - Հա՛, - զարմացավ Մուկ թագավորը, - թողե՛ք, թող գնա:
  - Մուկ թագավորը նամակ գրեց թոշուն թագավորին, թե՝
  - Ես իմ հպատակներից մեկին թեզ եմ տվել. թոշուն է, մուկ չէ:
  - Անունն ի՞նչ է:
  - Զղիկ:
  - Զղիկին կանչե՛ք:
  - Զղիկն եկավ.
  - Ի՞նչ հարկ, ի՞նչ բան, ես թոշուն չեմ, մուկ եմ որ կամ, - ու ցույց տվեց առամները:
  - Այ անպիտան, դու ո՞չ մուկ ես, ո՞չ էլ թոշուն, բա դու ի՞նչ ես:
  - Սուտասա՞ն, - առացին մկնե՞րը, թե՞ թոշունները՝ չեմ հիշում:
- Միայն գիտեմ, որ Զղիկը ցերեկը մկներից է փախչում, գիշերը՝ թոշուններից: Մկները նրան Սուտասան Զղիկ են ասում, թոշունները՝ Սուտասան Գիշերահավուկ:

հարկ հարկատու	<ul style="list-style-type: none"> <li>- պետությանը կամ թագավորին տրվող հատուկ վճար</li> <li>- հարկ տվող, հարկ վճարող</li> </ul>
------------------	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------

*Լրացրո՞ւ:*

*Զղիկն եկավ.*

- Հա՛, - զարմացավ Մուկ թագավորը, - թողե՛ք, թող գնա:

*Զղիկն եկավ.*

*Այ անպիտան, դու ո՞չ մուկ ես, ո՞չ էլ թոշուն*

Գուշակի անունն ի՞նչ կղնեիր, մի քանի օրինակ գրի՞ր և քա-  
յատրի՞ր:

Նմուշ՝ զիշերաթոշուն, որովհետեւ զիշերներն է որս անում

Զղջիկն ու լուսինը

Հերիալը

Գրածդդ նկարի՞ր:




## ԳԻՏՈՒԹՅԱՆ ԼՐԱԳԻՐ

# ԶԱԽՈՐԾ ՓԱՆՈՍԻ ՀԵԹԻԱՅԸ

Հովհաննես Թումանյան

Ժամանակով մի աղքատ մարդ է լինում, անունը Փանոս: Խոր մի բարի մարդ է լինում, բայց ինչ զործ որ բռնում է՝ ձախ է զնում: Գրահամար էլ անունը դնում են Չախորդ Փանոս: Ունեցած-չունեցած մի լուծ եղն է լինում, մի սել ու մի կացին:

Մի օր եգները սելին լծում է, կացինը տռնում, զնում անտառը փետի: Անտառում էս Փանոսը միտք է անում, թե՝ մի բան որ ծառը կտրելուց նոր մին էլ նեղություն պետք է քաշնմ՝ ահազին զերանը զետնից բարձրացնեմ զցին սելի մեջը, ավելի լավ է՝ հենց սելը լծած բերեմ ծառի տակին կանգնեցնեմ, որ ծառը կտրեմ թե չէ, ընկնի մեջը:



Ասոծն արած է:

Եղներով սելը բերում է մի մեծ ծառի ներք կանգնեցնում, ինըն անցնում վերի կողմք, կացինը բաշում՝ թրթիկ հա թրթիկ: Շատ է բաշում թե թիշ, և էլ ինըն կիմանա, ծառը ճոճուալով զալիս է զարկում, տակումն անում, սելը ջարդում, եղներն էլ հետք: Փանոսը մնում է ապշած կանգնած: Ի՞նչ պետք է անի: Կացինը վերցնում է ու ծոծրակը բորելով ճամ-

փա է ընկնում դեպի տուն:

Ճամփին մի լճի ափով անց կենալիս է լինում: Տեսնում է՝ մեջը գայրի բաղեր են լողում: Ասում է՝ զլուխը բարը, չեղավ չեղավ, արի գոնի մի բաղ սպանեմ, տանեմ տամ կնկան: Ասում է ու կացինը պտտում, շպրտում դեպի բաղերը, որ մինն սպանի, բաղերը ճղճղալով ցրվում են, իմախչում, որը հեղեղնուան է մտնում, որը թռչում գնում, կացինն էլ ընկնում է լճի խոր տեղը, տակն անում, կորչում: Փանոսը մնում է լճի ափին կանգնած միտք անելիս: Ի՞նչ անի, ի՞նչ չանի: Շորերը հանում է գնում լճի ափին, ինքը մտնում մեջը, որ կացինը հանի: Գնում է, գնում, բանի առաջ է գնում, ջուրն Ենրան խորանում է, տեսնում է կարող է խեղդվել, ետ է դառնում, դուր գալի:

Դու մի՝ ասիլ՝ Փանոսը որ լիճն է մտնում ու խորը գնում, էղ ճամանակ լճափով մի անցկենող է լինում, տեսնում է էստեղ թափած շորեր կան, եղեղնուանի մեջ խորը գնացած Փանոսին էլ չի նկատում, էս շորերը հավաքում է, առնում գնում:

Փանոսը լճից դուրս է զալի, տեսնում շոր չկա: Մնում է տկլոր կանգնած:

Միտք է անում. «Ի՞նչ անեմ, Տեր Աստված, Էսպես տկլոր ուր գնամ»:

Սպասում է մինչև մութն ընկնի: Մթան հետ վեր է կենում գնում գյուղը: Որ գյուղին մոտենում է, ասում է՝ Էսպես տկլոր որ գնամ մեր տունը, տանրցիր ի՞նչ կասեն: Արի գնամ ախապորից շոր առնեմ հագնեմ՝ Էնպես գնամ կնկանս մոտ:

Ճամփին ծոռում է դեպի ախապոր տունը:

Դու մի ասիլ՝ Էղ գիշեր էլ ախապոր մոտ մեծարք կա, բեֆի էլ են տար ժամանակն է: Դուռը ծերպ է անում, տեսնի ով կա, ով չկա, եյու թերից մինը կարծում է, թե չունն է, ձեռի կրծած ոսկորը շպրտում է դեպի դուռը. ոսկորը դիպչում է աչքին, աչքը հանում:

Փանոսը ցալից վայ-վայ անելով ետ է դառնում. շներն էս ձենի վրա վեր են կենում, տեսնում են, օհո՛, մթնումը իրես մի տկլոր օրմին, ու չորս կողմից վրա են տալիս: Շների հաշոցի վրա մարդիկ դուրս են թափվում, տեսնում են՝ մի տկլոր մարդ փախած գնում է, շները ետեկից: Արանց երկար ու բարակ մտածելու վճռում են, որ կա թե չկա առ սատանա է:

Բավական տեղ դըշրդու տալով, հայիոյելով, հարայիրացով ընկնում են նտեմից, հալածում, տանում գցում անտառները: Շներըն էլ ետեկցը մի ճուռ պոկում են, ու էսպես տկլոր, աչքը հանած, կաղին տալով՝ խեղճ Փանոսը գնում է կորչում:

Մյուս օրը գյուղում տարածվում է, թե հապա չեր ասիլ՝ «Փանոսը կորել է: Գնացել է անտառ ինտի ու ետ չի եկել»: Գեղահավան հավաքվում են գնում. գնում են անտառ ման զալի, սելն ու եպները գտնում են ծառի տակ շարդար, ինքը չկա:

Դես Փանոս, դեն Փանոս. հարց ու փորձով հագուստն էլ գտնում են մեկի մոտ:

- Այ մարդ, էս հագուստը ո՞րտեղից է ընկել բեզ մոտ:

- Ձե՞՝ ախապեր, էս հագուստը էսպես մի լճի ափին վեր ածած էք, հավաքեցի թերի:

Գնում են լճի չորս կողմը պտտում, կանչում՝ «Փանո՞ս, Փանո՞ս», Փանոսը չկա:

Վճռում են, որ Փանոսը խեղդվել է:

Գալիս են ժամ ու պատարագ են անում, թելեխը տաղիս: Կնիկն էլ մի քիչ սուզ է անում, Փանոսին գովում, ախապում, հետո մի աւրիշ մարդ է ուզում, հետք պատկիւմ գնում:

- Ժի լուծ և  
տակովն անել  
մեծարք  
օքախն  
տակն անել  
դուօք ծերպ անել  
եղեգնուտ  
վեր ածած  
գեղահավան  
ոքչրդու
- սայլին կամ գութանին լծելու 2 (նաև 4 կամ 6) եզ
  - տակը զցել, վրան փուլ գտը, ծուծկել
  - բիֆ, ուրախություն, մեծարտելք
  - մարդ
  - այստեղ՝ ինչ-որ բանի (շրի) տակն անցնել, սուզվել
  - դուօք մի թիշ բացել
  - եղեգով պատված տեղ
  - թափիված
  - ամբողջ գյուղով
  - աղմուկ-աղաղակ

**Փոխարինի՛ր այլ բառերով ու արտահայտություններով:**

գործը ձախ է գնում

---

միտք անել

---

ձենի վրա վեր են կենում

---

տակն անել

---

ձամփիան ծռել

---

բեֆի տաք ժամանակն է

---

լլառ տալ

---

մթան հնտ

---

գլուխը քարը

---

դես Փանոս, դես Փանոս

---

**Փանոսի որսորդության մասին պատմի՛ր:**

---



---



---



---



---

Տերսում այս նախադասությունները գտի՛ր և ավարտի՛ր:  
Ըստ մի բարի մարդ է լինում. \_\_\_\_\_

Կացինք վերցնում է ու \_\_\_\_\_

Ասում է՝ զլուխը բարը, \_\_\_\_\_

Դու մի ասիլ՝ Եղ զիշեր Էլ \_\_\_\_\_

Չախորդ Փանոսին նամակ գրի՛ր:

Փանոսի կնոջը նամակ գրի՛ր:

Փանոսի մասին այնպիս պատմի՛ր, որ սիրենք նրան:

Դաշինն ինչպե՞ս կպատմի հերիտթի այն հատվածը, որտեղ ինքը կա:

Զախորդ մարդկանց հայտարարություններ

ԵԱՏԸՆԹ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՍՆԱԵԼՔ ՄԱՐԴԸ

Հովհաննես Թումանյան

Ժամանակով մի աղքատ մարդ կար, որրան աշխատում էր, որրան չարչարժում էր՝ զարձյալ միևնույն աղքատն էր մնում: Հուսահատված մի օր նա վեր կացավ, թե՝ պիտք է գնամ գտնեմ Աստծուն, տեսնեմ՝ ևս ե՞րբ պիտք է պրծնեմ այս աղքատությունից ու ինձ համար մի բան խնդրեմ:

Ճանապարհին մի զայլ պատահեց.

- Առաջ բարի, մարդ-ախաղեր, ո՞ւր ևս գնում,- հարցրեց զայլը:
- Գնում եմ Աստծու մոտ,- պատաժանեց աղքատը,- կարդ ունեմ ասելու:


- Դե որ գնաս Աստծու մոտ, - խնդրեց զայլը, - ասա մի սովոր զայլ կա, զիշեր-ցերեկ ման Է զայլիս սար ու ձոր, ուտելու բան չի գտնում, ասա մինչև ե՞րբ պիտք է սովոր մնա, որ ստեղծել ես՝ ինչո՞ւ չես կերպելու հասցնում:

- Լո՛վ, - ասաց մարդն ու շարունակեց ճանապարհը:

Ծառ զնաց թե թիշ, պատահեց մի սիրուն աղջկա:

- Ո՞ւր ևս գնում, ախաղե՞ր,- հարցրեց աղջիկը:

- Գնում եմ Աստծու մոտ:



- Երբ որ Աստծուն տեսնես,- աղաքից սիրուն աղջիկը,- ասա այսպիսի մի աղջիկ կա՝ շահել, առողջ, հարուստ, բայց չի կարողանում ու բախտանալ, բախտավոր զգալ իրան. ի՞նչ պիտի լինի նրա ճարը:

- Կասիմ,- խոստացավ Ճամփորդն ու գնաց, պատահեց մի ծառի, որ թեև շրաբին էր կանգնած, բայց չոր էր:

- Ո՞ւր ես գնում, այլ Ճամփորդ,- հարցրեց չոր ծառը:

- Գնում եմ Աստծու մոտ:

- Դե կանգնի՛ր, մի երկու խոսք էլ ես ապապիմ,- խնդրեց չոր ծառը,- Աստծուն կասես՝ այս ի՞նչ բան է, բուսել եմ այս պարզ շրի ափին, բայց ամառ-ձմեռ չոր եմ մնում, ե՞րբ պիտք է ես էլ կանաչիմ:

Այս էլ լսեց աղքատն ու շարունակեց ճանապարհը:

Այնքան գնաց, մինչև գտավ Աստծուն: Մի բարձր ժայռի տակ, մեջքը ժայռին դնեմ տված, ալեռը մարդու կերպարանքով նստած էր Աստված:

- Բարի օր,- ասաց աղքատն ու Կանգնեց Աստծու առաջին:

- Բարով եկար,- պատասխանեց Աստված,- ի՞նչ ես ուզում:

- Են եմ ուզում, որ ամեն մարդու էլ հակասար աշքով մտիկ անես, մեկին ավար շանես, մյուսին՝ խափար, ես այնքան տանջվում, աշխատում եմ, Ելի չեմ կարողանում կուշտ փորով հաց գտնեմ, իսկ շատերը, որ իմ կեսի շափ Ել չեն աշխատում, հարուստ ու հանգիստ ապրում են:

- Դե գնաց, եիմի կիարստանաս, բռ բախտը տվեցի, գնաց վայելի՛ր,- ասաց Աստված.

- Ել բան ունեմ ասելու, Տե՛ր,- ասաց աղքատն ու պատմեց սոված գայլի, սիրուն աղջկա ու չոր ծառի ապապարանքը:

Աստված բոլորի պատասխանը տվեց, և աղքատը շնորհակալու թյուն արագ ու հեռացավ:

Վերադարձին պատահեց չոր ծառին:

- Ինձ համար ի՞նչ ասաց Աստված,- հարցրեց չոր ծառը:

- Ասաց, բռ տակին ոսկի կա. մինչեւ այդ ոսկին չինանեն, որ արմատներդ ենդին հասնեն, դու չես կանաչիլ,- պատմեց մարդը:

- Ել ու՞ր ես գնում, արի՝ ոսկին հանիր, էլի, համ թեկ օգուտ կլինի, համ ինձ, դու կիարստանաս, ես կկանաչիս:

- Զե՞տ, ես ժամանակ չունեմ, շտապում եմ,- պատասխանեց աղքատը,- Աստված ինձ բախտ տվեց, ես շուտով պիտք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելիմ,- ասաց ու գնաց:

Հետո սիրուն աղջիկը պատահեց ու Ճամփորդի առաջը կտրեց.

- Ի՞նչ լուր բերիր ինձ համար:

- Աստված ասաց՝ դու պիտի թեկ համար մի մտերիմ կյանքի ընկեր գտնեն, այն ժամանակ էլ տիսուր չես լինիլ, ուրախ ու երջանիկ կլինեն:

- Դե որ այդպիս է, արի՝ դու եղիր իմ կյանքի մտերիմ ընկերը,- բախտանձեց աղջիկը Ճամփորդին:

- Զե՞տ, ես թեկ ընկերակցելու ժամանակ չունեմ, Աստված ինձ բախտ է տվել, պիտք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելիմ,- ասաց աղքատն ու հեռացավ:

Ճանապարհին սպասում էր սոված գայլը. հնովից հենց որ տեսավ Ճամփորդին, վագեց առաջը կտրեց:

- Հը, Աստված ի՞նչ ասաց:

- Ախաղե՛ր, Աստծու մոտ գնալիս թեկանից հետո մի սիրուն աղջիկ ու մի չոր ծառ էլ պատահեցին. աղջիկն ապսպից, թե ինչո՞ւ ինքը չի կարողանում ուրախանալ, ծառն էլ թե՝ ինչո՞ւ է գարուն-ամառ չոր: Աստծուն պատմեցի, ասաց. աղջկանն ասա իրան համար մի կյանքի ընկեր գտնի՝ կրախտավորվի,

ծառին էլ ասա, քո տակին ոսկի կա, պետք է այդ ոսկին հանեն, արմատներդ հողին հասնեն, որ կանաչն: Եկա իրանց պատմեցի Աստծու խոսքերը, ծառն ասաց, դե արի հանիք ոսկին տար, աղջիկն էլ թե՝ ես հենց քեզ եմ ընտրում ինձ ընկեր: Ասացի, չէ՛, ախաղե՛ր, չեմ կարող, Աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելիմ:

- Իսկ ինձ համար ի՞նչ ասաց Աստված,- հարցրեց սոված զայլը:
- Քեզ համար էլ ասաց՝ սոված ման կզատ, մինչև մի անխելք մարդ կգտնես, կուտես, կկշտանաս:
- Էլ քեզանից անխելք ժարդ՝ ո՞րտեղից գտնեմ, որ ուտեմ,- ասաց զայլն ու կերպ անխելք աղքատին:

ապսպել ՝ ուրիշի միջոցով հանձնարարել, պատվիրել  
թախանձել ՝ շատ խնդրել, աղածել, աղածել-պաղատել

*Հերիաթի բոլոր հերոսներին թվի՛ր:*

---

---

*Նկարի՛ր և նկարագրի՛ր՝  
գայլին,*

---

---

*չոր ծառը,*

---

---

*աղջկան:*

---

---

*Ո՞ր նախադասության բառերն են սրանք. զտի՛ր այդ նախադա-  
սությունը հերիաթում և գրի՛ր:*

*մի ժայռի տակ բարձր ալենոր կերպարանքով մարդու նստած էր  
Աստված ժայռին դեմ՝ տված մեջքը*

---

---

Մի ուրիշ նախադասություն է, ինքը հերիաթից դուրս գրիր, բայց  
բառնիի դասավորությունը խառնի՞:

Կողքիդ նոտողին տո՞ւր և խնդրի՞ր, որ նա նախադասությունը ձիշտ  
գրի:

Ո՞րն է հերիաթի ամենատանիելք նախադասությունը:

Հերիաթի հերոսներին հարցեր տո՞ւր:

Ականջիդ օդ արա:

Բախտն իրենից առաջ է ընկել:

Ճան բախտը պոչից կախի:

Որի աստողը պայծառ է, որինը՝ կույր:

# ՄԿԱԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Աթարեկ Խնկոյան

Սով էր, սով էր Մկատան,  
Կատիի ձեօքից լկոտան,  
Գզիրն ընկավ դռնեդուր,  
Եւ շբողեց տուն-կտուր,  
Զահել, ահել զեղովի.  
Չոշերին ջոկ տեղովի  
Կանչեց, թերեց ժողովի,  
Ձե ի՞նչ անեն, որ կատվեն  
Մի հնարքով պատվին:  
Եկան գյուղի ջոշերը,  
Երկար բարակ պոչերը,  
Մասնակցեցին խորիրդին.

Մի մուկ խոսեց իր հերթին.  
- Լսե՛ր, մկնն՛ր ցեղակից,  
Չունեմ որդիի, կողակից,  
Ես մի անտեր ծերուկ եմ,  
Բայց պատվավոր մի մուկ եմ  
Պակսեց ուժը իմ ոտի  
Պետք է մեռնեմ անոթի...  
Սովոն է չորեկ դռանը.  
Այս մռունը, մռունը,  
Վեր է ընկել մառանը,  
Բնշրան ասես նազ անի,



Ստից սատկի, տագ անի,  
Սուկ տեսնելիս վազ անի,  
Գլխից բռնի, կախ անի,  
Թաթովք տա, խաղ անի,  
Ուտի, թեքր չաղ անի:  
Եսպիս գուլում ու կրակ.  
Դեռ աշքերն էլ գույզ ճրագ:  
Բայց թե ապնիվ մեր ցեղը  
Կորչելու չէ գուր տեղը.  
Ցավն էլ ունի իր դեղը...  
Մի, թերել եմ ես մի զանգ,  
Շատի, ծլնգոց,  
Սեջը պնդոց:

Կատվի վկից մենք կախ տանք,  
Որ ինչքան էլ օրորա,  
Որ ինչքան էլ շորորա,  
Ստից սատկի, տագ անի,  
Գալն իմանանք զավանի:  
Ե՛, զանգը ո՞վ կախ անի:

- Ալո՛, դո՛ւ:
- Ալո՞ն տանի:
- Բալո՛, դո՛ւ:
- Բալո՞ն կախի:
- Չալո՛, դո՛ւ:
- Չալո՞ն կադ է:
- Մստո՛, դո՛ւ:
- Մստո՞ն կարձ է:
- Փստո՛, դո՛ւ:
- Էղ էլ խի՞ղճ է:
- Համբո՛, դո՛ւ:
- Ես տկար եմ:
- Զամբո՛, դո՛ւ:
- Անհնը տարա,

Բու որ կատուն գա ինձ վրա՞:

- Բառն, Խտոն թող մեկից
- Քոնեն կատվի բամակից:
- Բ՞նչ է խոնում չոր զանգը,  
Լուլ է դու տար Եղ զանգը,  
Էլ ի՞նչ Բառ, ի՞նչ Ֆստան, -  
Ճստաց Բառն ճսճտան:
- Լոի՛, հանգուեզն,  
Կոտորիք դուր,  
Վախկնաւերիդ ես թաղեմ,  
Ճսու ասեմ, թե՞ զանց կախեմ,-  
Գոչեց ջոջը,  
Բաշեց պոչը:

Լստան - թկիիկ

զփիր - ջոջերի երամանները կատարող, տարածող

- |            |                        |
|------------|------------------------|
| ահել       | - ծեր                  |
| ջոկ        | - սուանձին             |
| հնարք      | - միջոց                |
| խորհուրդ   | - այստեղ՝ ժողով, հավաք |
| կողակից    | - ամուսին կամ կին      |
| անոթի      | - սոված                |
| տապ անել   | - թարնվել              |
| վագ անել   | - վազել                |
| զուլում    | - փորձանք, աղետ        |
| տկար       | - թույլ, հիվանդ        |
| հանդուգն   | - համարձակ, անվախ      |
| պոչը բաշել | - թողնել գնալ          |

*Փորձի՛ր ինքդ բացատրել:*

*Սովո՞ր է չորեկ դռանը* \_\_\_\_\_

*Ցավն էլ ունի իր դեղը* \_\_\_\_\_

*Չոր զանգ* \_\_\_\_\_

*Օգտագործելով առակի բառերը՝ այս կատվի մասին գրի՛ր:*

---



---



---



---



---

*Գրեցի՛ր: Հիմա էլ նկարի՛ր կատվին:*

*Զանգը բերող մկան մասին պատմի՛ր:*

---



---



---

*Որևէ մեկին նամակ գրի՛ր և պատմի՛ր ժողովի մասին:*

---




---



---

## Նկարի՞ր Մկնտանը:



## Նկարագրի՞ր Մկնտանը (տները, փողոցները, լույսերը...):

---

---

---

---

---

Կատուն ամեն ինչ լսել էր և գլուխ գովելով իր ընկերներին  
պատմում էր այդ ժողովի մասին:

---

---

---

---

---

# ԾԱՆՍՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՂԵՐԻ


## ԼՈՒՍԻՆ

Յրանսիսկան ժողովրդական հերիաք

Ժուկով-Շամանակով մի փոքրիկ, շատ փոքրիկ զյուղ կար: Էս զյուղի ընտեղիչներին կոչում էին բալզարցիներ, որովհետև զյուղի անունը Բալզար էր: Նրանք շատ միամիտ մարդիկ էին: Չէ, միամիտ չէին, ճիշտը որ ասենք՝ խնելքից մի թիշ պակաս էին:

Գյուղամիջում մի նկեղեցի կար: Եկեղեցու բակում մոշի մի թուփ էր աճում: Թուփը տարեցարի մեծանում էր, խոշորանում և նկեղեցու դուռը համարյա փակել էր. մարդիկ հավիկ էին այնտեղ մտնում:

Մի օր էլ գյուղացիները հավաքվում են ու որոշում՝ նկեղեցին ենոացնեն, որ հանգիստ ելումուտ անեն: Գյուղի կանայք մի երկար, հաստ պա-



բան են գործում: Տղամարդիկ պարանը երեք անգամ փաթաթում են զանգակատան շուրջը: Ահել-շահել հավաքվում են, իրար կողքի շարվում, պարանից բաշում ու գոռում.

- Մե՞ն-երկո՞ւ, բաշեցի՞սը, մե՞կ-երկո՞ւ, բաշեցի՞սը...

Բաշում են, բաշում, պարանը թիշ-թիշ ձգվում է, երկարում. բալզաթցիներն ել մի երկու սաստիմետր հեռանում են եկեղեցուց ու կարծում են, թե եկեղեցին է շարժվել: Ուրախանում են ու գոռում.

- Եկեղեցին տեղից շարժվո՞ւմ է:

Շատ որ ձգում են, պարանը կտրվում է, և բալզաթցիները իրար վրա են թափվում: Վեր են կենում, շորները թափ տալիս ու նայում եկեղեցուն: Նայում են ու շատ են զարմանում, որ եկեղեցին մի մատնաշափ էլ չի շարժվել: Առաջվա պես իր տեղում է նաև մոշի թուփը:

Մի անգամ էլ բալզաթցիները հորիզոնում թույլ, նարնջագույն լույս են նշմարում և սկսում են դեսուդեն վագել ու գոռալ.

- Ժողովո՞րդ, երկինքը վառվո՞ւմ է, երկինքը վառվո՞ւմ է: Թմբո՞ւկ զարկեր, շուտ, սատիճաններ բերեք, դույլերով ջո՞ւր հասցրեք:

Մեծ իրարանցում է սկսվում: Երբ ամեն ինչ պատրաստ է լինում, մարդիկ մոլորգած իրար հարցնում են, թե ո՞ր կողմից են հանգստելու կրակը:

- Ի՞նչ եք շվարել, - գոռում է գյուղի առաջնորդը, - իրեն կրակը: Առաջ, իմ հետևից:

Ասում է ու վագում: Գյուղացիները՝ նրա հետևից: Մի բանիս աստիճաններ են տանում, մյուսները՝ շրով լի դույլերը: Գոռում-գոյշունով, հարայ իրոցով վագում են, գյուղից դուրս գալիս՝ ուրախանալով ու պարծենալով, թե տեսեր, ե՞, ինչ մարդիկ ենք մենք՝ բալզաթցիներս, որ մի մարդու նման գնում ենք աղետից փրկվելու:

Բայց մի թիշ որ առաջ են գնում ու մոտենում անտառին, հանկարծ տեսնում են, թե կլորերես լուսինն ինչպես է ծառերի կատարից հորիզոն բարձրանում և իր նարնջագույն լույսով լուսավորում ամրող Բալզաթը: Եվ զիսի են ընկնում, որ անտառի ծայրին ոչ մի իրդեհ էլ չի եղել, այլ սովորական լուսինն է:

Բա իգո՞ր էին բոլորը ծաղրում բալզաթցիներին: Բայց, պարզ է, նրանց ել դա դուր չեր գալիս:

Մի օր էլ գյուղի առաջնորդը հավաքում է իր տասներկու խորիրդականներին և ասում.

- Ժամանակն է, որ մարդկանց աշրում Բալզաթի անունը բարձրանա: Են օրը, որ տեսա, թե լուսինը ինչպես էր բարձրանում, մտրովս մի բան անցավ ու մինչև հիմա հանգիստ չի տալիս ինձ: Ասում եմ՝ գնանք լուսինը գրավենք, տեսնենք՝ ի՞նչ կա-չկա վրան: Պետք է առաջինը հասնենք լուսին և բալզաթցիների փառքն ու պատիվը աշխարհով մենք անենք:

Խորիրդականներն ուրախությունից ծափ են տալիս:

- Սպասեցեք, - ասում է նրանցից մեկը, - բա ո՞նց ենք լուսին հասնելու:

- Դա շատ հեշտ է, - պատասխանում է առաջնորդը: - Այ, տեսեք, հիմա մենք տասներեք մարդ ենք: Եթե մեզնից ամեն մեկն իր ենտ մի հարեան բերի՝ բանվեց կդառնանք: Բանվեց բալզաթցիներից ամեն մեկը մի տակառ կվերցնի ու զլորելով կտանի գյուղից դուրս, կբարձրացնի այն թրի վրա, որտեղ առաջ մեր ջրաղացն էր: Տակառները կշարենք իրար վրա և, գրո՞ւր տանի, համոզված եմ, որ կմոտենանք լուսին ու մի ցատկով կիշնենք նրա վրա:

Բալզաթցու խոսքը խոսք է, որ ասաց՝ կանի: Լիալուսնի հենց առաջին օրը

մեծ տանջանրով ու չարչարանքով բանվեց տակառները գլորում բարձրացնում են թլուրը: Առաջնորդը կանգնում է առաջին տակառի վրա: Պարան են բերում, մի ծայրին կեռիկ են ամբացնում և մտցնում երկրորդ տակառի անցրի մեջ, իսկ մյուս ծայրը տալիս են առաջնորդին: Սա բաշում, վեր է բարձրացնում երկրորդ տակառը, դնում առաջինի վրա, իսկ ինքը վեր է մազլցում: Նույն ձևով բարձրացնում է երրորդ, իետո չորրորդ, հինգերորդ տակառները, որոնք աշտարակի նման դարսվում են իրար վրա: Երբ առաջնորդը հասնում է բանվեցերորդ տակառին, և էլ ուրիշ տակառ չի մնում, վերսից գոռում է.

- Ժողովուրդ, համարյա տեղ եմ հասել: Մի քիչ էլ որ բարձրանամ, ձեռք լուսնին կդիպչի: Մի տակառ էլ տվե՞ք:

Ներքեխց բալզաթցիները թե՝ գյուղում էլ տակառ չի մնացել: Մի քիչ համբերի, գնանք հարեան գյուղից պարտով մի տակառ ուզենք, բիրենք:

- Թո՛ւ, - վերեխց բարկանում է առաջնորդը: - Տնաշեննե՛ր, գլխներիդ մեջ մի կոպեկի խելք չկա, է՛: Տո հենց ամենաներենի տակառը հանեք տվեք:

Բալզաթցիները ենթարկվում են: Տեղահան են անում առաջին տակառը, որին հենված էր ամբողջ աշտարակը: Տակառը մի կերպ զուրս են բաշում, բայց հանում են թե չե, մեկ էլ՝ թըրը՝ մփ, աշտարակը միանգամից դդրդալով փուլ է գալիս: Տակառների հետ ցած է գլորվում նաև առաջնորդը: Ուտ ու ձեռք շարդում է, մի չորս կող էլ հետք: Գյուղացիները զարմանքից մնում են բերանները բաց կանգնած, և ոչ մեկը ծպտուն չի հանում:

...Ու մինչև օրս էլ չեն հասկանում, թե այդ ինչպես պատահենց, որ այդքան խնամքով մշակված ճանապարհորդությունը այդպիսի տիսուր ավարտ ունեցավ:

գանգակատուն

- կառույց, ուր եկեղեցու գանգերն են տեղադրված

իրարանցում

- խառնաշփոթ, ժխոր, խուճապ, եռուզեռ

շվարել

- մոլորել, ինչ անելը չիմանալ

աղետ

- փորձանք

կեռիկ

- փորբիկ կեռ, գլուխը կամ ծայրը ծոած հաստ լար

նշմարել

- նկատել, աղոտ կերպով տեսնել

Համառոտ պատմիր՝ ինչպես էին բալզաթցիները եկեղեցին տեղից շարժում ու այդ հատվածը վերնագրի՞ն:

Բալզաթցիների արարքները թվարկի՞ր:

1. եկեղեցին տեղաշարժելը,

2.

Բնշպիսի՞ն էին բալզաթցիները:

---

---

Նկարի՞ր զյուղի տռաշնորդին, պատմի՞ր նրա մասին:

---

---


---

---

---

---

---



Ի՞նչ էին խոսում բալզաթցիները՝ եկեղեցին «Չարժելիս»:

Դե, թող ասեն՝ հիմար ենք, այ այսպես կրացենք մեր ճանապարհը, -  
ասում է մի բալզաթցի: Մեկ ուրիշն էլ յե՝

---

---

Մի ուրիշ երիտասարդ էլ վրա է բերում.

---

---

Իսկ մի ալենոր, իմաստունի նման, ավելացնում է.

---

---

Ծանալ հեռագիր բալզաթցիներին.

---

---

Վանդակներում համապատասխան քառեր գրիր և ընդգծված այլունակում ֆրանսիական մի մեծ քաղաքի անուն կպարդաս:

## ԳԼՈՒԽԱԿԱՆՆԵՐԻ ԼՐԱԳԻՐ

Հայոց պատմության մեջ առաջիկ լրագիրներ

# ԳՈՐԾԻ ՏԱԿ

Հայոց Դուռաղի Բիսերի

Վագրն ու ձին ապրում էին հյուրասենյակի գորգի տակ: Նրանք շատ մտերիմ էին:

Նրանց դուր էր գալիս հյուրասենյակում ապրելը, որովհետև շատ էին սիրում հյուր ընդունել:

Այդ տանը մի աղջիկ էլ էր ապրում: Մի անգամ նա վագրին ու ձիուն հարցրեց.

- Ինչպի՞ս եք գորգի տակ տեղավորվում:
- Շատ պարզ, ախր մենք երեակայական ենք, - պատասխանեցին նրանք:

- Ես երեակայական վագր եմ:
- Իսկ ես՝ երեակայական ձի:
- Որտե՞ղ է քո խոտը, - ձիուն հարցրեց աղջիկը:
- Գորգի տակ, - պատասխանեց ձին: - Չե՞

որ խոտն էլ է երեակայական:

- Քո կերակուր-ոսկորնե՞րն էլ են գորգի տակ, - հարցրեց աղջիկը վագրին:

- Օսկորնե՞րը: Իհարկե, - պատասխանեց վագրը ու լիկեց շրթունքները:

Հետո թարնվեց գորգի տակ: Ձին էլ հետեւ նրան: Աղջիկը մնաց մենակ:

Նա մի բուղթ վերցրեց, վրան մի քանի կտոր շարար նկարեց ու դրեց գորգի տակ:

Բիշ հետո նա խրթխրթոց լսեց՝ «խըրթ-



**խորթ»:** Չին էր, որ հաճույքով ուտում էր շաբարը:

Աղջիկը թղթի կտորի վրա գրեց. «Բա վազրեն ի՞նչ են սիրում» ու դրեց գորգի տակ:

Գորգի տակից շշուկներ լսվեցին, ինտո դուրս ցցվեց ձիու գլուխը:

- Հայ ու խոտ, - ասաց նա:

Աղջիկը շհավատաց:

- Մյ դու անպիտան ձի, - ասաց աղջիկը:- Հայ ու խոտ սիրում են ոչ թե վազրերը, այլ ձիերը: Կնա հարցրու վազրին, թե ի՞նչ է ուզում:

Չին ետ զնաց: Նրա փոխարեն դուրս եկավ վազրը:

- Չեռի ժամացույց եմ ուզում, - ասաց նա,- որպեսզի իմանամ, թե ժամը րանիսն է:

- Լավ, - ասաց աղջիկը:

Նա ձեռի ժամացույց նկարեց ու տվեց նրան: Հետո ձիու համար հայ ու խոտ նկարեց: Վազրն անհետացավ: Բայց թիշ անց երկու սով հայտնվեցին:

- Շատ շնորհակալ ենք թեզանից, - ասացին նրանք ու համբուրեցին աղջկան:

- Ուրիշ ի՞նչ եք ուզում, բանի շուտ է, ասեք, - ասաց աղջիկը: - Արդեն իմ ընկելու ժամանակն է:

- Անձրեսանոց ենք ուզում, - ասացին վազրն ու ձին:

- Անձրեսանո՞ց, - զարմացավ աղջիկը: - Ի՞նչ է, գորգի տակ անձրեն՝ Է զալիս... Հա՛... Հիշեցի, երեսկայական անձրեն է:

- Իհարկե, - ասացին նրանք:

Եվ աղջիկը նրանց համար անձրեսանոց նկարեց:

- Շնորհակալությո՞ւն, - ասացին վազրն ու ձին: - Բարի գիշե՞ր:

- Բարի գիշե՞ր, - պատասխանեց աղջիկն ու գնաց ընկելու:

Բայց թիշ հետո գլխի ընկավ, որ երեխ տիսուր բան է, երբ մարդ նոր, զեղեցիկ անձրեսանոց ունի, իսկ անձրեն չի զալիս: Մի մեծ թղթի վրա անձրես նկարեց, հետո ոտքի թաթերի վրա մտավ հյուրասենյակ և անձրենը դրեց գորգի տակ:

Առավոտյան, երբ աղջիկը հյուրասենյակի մտավ, մինչև ոտքի կոճերը հայտնվեց ջրի մեջ, իսկ վազրն ու ձին նստել էին բաց անձրեսանոցի մեջ և լողում էին՝ ասես նավակում լինենին:

«Երեխ հորդ անձրեն եմ նկարել», - մտածեց աղջիկը:

Նախաձաշից հետո նա դարձյալ հյուրասենյակի մտավ: Մայրիկը մինչ այդ ավելի էր գորգը: Ոչինչ չէր մնացել՝ ո՞չ ջուր, ո՞չ անձրեսանոց, ո՞չ վազր, ո՞չ ձի:

Նա վերցրեց նկարչական տետրը և խոր քուն մտած վազր ու ձի նկարեց: Թիշ անց մայրիկը գնաց: Իսկ աղջիկը դեռ նստել ու նայում էր բուխարիկի կրակին:

Հյուրասենյակում լուսթյուն էր: Եվ այդ լուսթյան մեջ միայն բարձր խօրմանց էր լսվում:

մտերիմ

երեսկայական

հաճույք


- հարապատ, ընկեր, բարեկամ

- ոչ իրական, մտրում հնարած

- սիրով, բավականությամբ

Ի՞նչ եւ իմ՝ հերթարքի աղջոկը:

Անուն: \_\_\_\_\_ Հ.:




Հարցերիս, խնդրում եմ, պատասխանի՛ր:

- Դու ո՞ւմ են և որո՞շ կուզենայիր ապրել:

Իսկ դու ի՞նչ կուզենայիր ունենալ գործի տակ:

Բնշո՞ւ:

Պո կարծիքով ինչպիսի՞ն է երևակայական ձի՞ն:



Իսկ վար՞ը:

Եթե ձեր գործի տակ կապիկ ապրեր, ի՞նչ կանեիր:

Պատմի՛ր ձեր հյուրանոյակի մասին:

Շարունակի՞ն.

Աղջիկը բարձրացրեց զորքի ծայրն ու հայտնվեց դրա տակ:

– Little – many small  
Very slight swelling or bleeding at mouth upon taking water and may cause  
localised mucosal haemorrhage. The oral mucosa is often hyperaemic and oedematous.  
Gum hyperplasia is also common. The gingiva becomes thickened and swollen.  
Dental caries are usual, particularly molars, and may be deep. There is  
increased risk especially amongst smokers or those  
with diabetes, hypertension and/or heart disease.  
Gum disease is common.

## ԳՐԱԾԱԿԱՆ ԱԿԱՐԻՑԻ ԲԱՐԵՎԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Աղվեսն և կավ բարձր սարից,  
Հարցմունք արավ լիբը թառից.  
Մեծ խորոգ է հարկավոր ինձ.  
Բաղցած աղվեսն, ազին ծաղիկ:

Աղվեսն հազել բուրքը դեղին,  
Պտուտ կուգա շուրջը գեղին.  
Զուր կտրինց տատիս լեղին,  
Դեղին աղվեսն, ազին ծաղիկ:

Աղվեսն տսավ պառավ տատին.  
«Մտիկ չիմ տա ձեռիդ փետին,  
Կարոտել եմ թմփիկ ճուտին».  
Անվախ աղվեսն, ազին ծաղիկ:

Աղվեսն եկել, նստել դեպին,  
Երկար ազին ծռել վպին,  
Աչք է ձգել մեր խորոպին...  
Են գող աղվեսն, ազին ծաղիկ:



Մին էլ կանչեց տատս պառավ.

- Ամա՞ն, հասի՞ք, տարա՞վ, կերա՞վ...

Գլխիս ևս ի՞նչ փորձանք բերավ

Անտեր աղվեսն, ագին ծաղիկ:

- Այ իմ խորով, կարմիր խորով,  
Ման կուգայիր զոռով-զոռով,  
Փետուրդ արակ ողջ դար ու փոս  
Էն չար աղվեսն, ագին ծաղիկ:

Աղվե՞ս, աղվե՞ս, փոքրիկ զավան,  
Ուներդ կարճ ու խիստ վավան,  
Շներն ամեն թեզ չհասան,  
Ճարպիկ աղվես, ագին ծաղիկ:

հարցմունք անել

խորով

բուրք

պտուտ գալ

մտիկ տալ

դար ու փոս

- հարցնել, հետարրքին

- արաղակ, արլոր

- մորթն վերարկու

- պտտվել, շրջել ինչ-որ բանի շուրջ

- նայել

- անհարթ, խորդուրդ

Հարցերին պատասխանի՛ր:

Ի՞նչո՞ւ աղվեսը զյուղ եկամ:

Ի՞նչ եղամ, երբ տատր տեսալ աղվեսին:

Ի՞նչ ասաց աղվեսը վախեցած տատին:

Պատամ տատր ի՞նչ կանչեց:

Ոտանավորն ինչպե՞ս ավարտվեց:

Պառավին, աղվեսին և խորոզին նկարի՞ն ու պատմի՞ր նրանց մասին:

պառավ

---

---

---

աղվես

---

---

---

խորոզ

---

---

---

Խորոզ
Աղվես
Պառավ

Խորոզին կատակ-նամակ գրի՞ն:

---

---

---

Կատակ-նամակով պառավ տատին ցավակցի՞ն, միսիթարի՞ն:

---

---

---

Պոշատ աղվեսին էլ նամակ գրի՞ն իր բնկերոջ արարի մասին:

---

---

---




# ՄԻ ԿԱԹԻԼ ՄԵՂՐԸ

Հովհաննես Թումանյան

Մի գյուղացի իրենց գյուղում  
Խանութ սարքել, բան էր ծախում:  
Օրֆան մի օր մոտիկ գյուղից,  
Սահակն ուսին, շունն ետեից  
Ներս է մտնում մի զբան.

- Բարի օր քեզ, ա'յ խանութպան,  
Մեղրը չունե՞ս,  
Մի քիչ տաս մեզ:  
- Ունեմ, ունեմ, չոքան ախակիր,  
Ամանդ ո՞ւր է, ամանքդ քեր,  
Բ'նչ տեղից որ ինքդ կուզես՝  
Էս սհաթին քաշեմ տամ քեզ:

Էսպես հանգիստ, էսպես սիրով,  
Մեղրից անուշ լավ խոսքերով  
Մեղր են քաշում, մին էլ հանկարծ  
Մի կաթ մեղրը ծորում է ցած:  
- Տը'զզ, էն կողմից մի ճանձ գալի,



Ես կաթիլին վեր է գալի:  
Ճանձի վրա՝ թարուն-թարուն,  
Ես խանութի տիրոջ կատուն  
Դուրս է ցատկում,  
Թաթով զարկում...

Բայց հենց կատվի ցատկելու հետ  
Հովվի շունը խկույն ենթ  
Հաֆ է անում,  
Վեր է կենում,  
Խեղճ փիսիկին  
Դնում տակին,  
Չեռաց խեղդում  
Ու շպրտում:  
- Խեղդե՞ց, խեղդե՞ց, վա՞յ իմ կատուն,  
Այ սատկես դու, շան որդու շուն, -  
Թարկանում է խանութպանը  
Ու ձեռն ընկած մոտիկ բանը  
Տուր՝ թե կտաս շան ճակատին,  
Շուռ է տալի կատվի կողքին:

- Վա՞յ, ձե՞զ մատադ, ապլան շունս.  
Իմ ապրուստս, տե՞զս, տո՞նս...  
Տունդ բանդվի, այ խանութպան,  
Անխիղճ, լիրը, չար, ֆլան-ֆստան,  
Ո՞սց թե դու իմ շանը զարկե՞ս,  
Դե զարկելը հիմի դու տես...  
Գոռում է մեր աժդահակը,  
Մեծագլուխ իր մահակը  
Ետ է տանում ու ցած քերում,  
Խանութպանին շեմքում փոռում:

սիաթ  
ձեռաց  
քաշել  
վեր գալ  
շուռ տալ  
աժդահակ

- ժամ, պահ, վայրկյան  
- տեղնուտեղը  
- կշռել  
- իշնել  
- այստեղ՝ փոել, պառկեցնել  
- հսկա

«Մի կաթիլ մեղրը» սկզբից մինչև մեղրի կաթիլի ընկնելը կարո՞ղ եւ պատմել ու վերնագրել:

---

---

---

---

---

Եթե ամեն ինչ այդքան լավ էր, խանութպանն ու հովիվը ինչո՞ւ կռվեցին: Պատմածդ վերնագրի՞ր:

---

---

---

---

---

Գրեցի՞ր, կեցե՞ս:

Խանութպանի հարազատներին նամակով այնպես պատմի՞ր պատահածի մասին, որ նրանք զրեժի մասին չմտածեն:

---

---

---

---

---

Այս տուրուղմիոցը տեսնելով՝ մեղրի կաթիլն ի՞նչ է մտածում:

---

---

---

---

---

Մեղրի կաթիլին պատասխանի՞ր՝ նրան մեղաղբեյով:

---

---

---

---

---

- Սպանեցի՞ն... հայ, օգնություն...  
Ու թաղից թաղ, ու տանից տուն  
Զեն է տալի մնկը մյուսին.  
- Հայ, օգնություն... սպանեցի՞ն...  
Վերի թաղից, ներքի թաղից,  
Ճամփի վրից, գործի տեղից,  
Ճիշով, լալով,  
Հարայ տալով -  
Ել հերն ու մեր,  
Քիր ու ախաղեր,  
Կին, երեխեր,  
Ըսկեր տղերը,  
Չորանչ, աներ,  
Քավոր, սանհեր,  
Քեռի, փեսա...

Ի՞նչ իմանաս էլ՝ ո՞վ է սա,  
Գալիս են ու անվերջ գալիս,  
Ով գալիս է՝ տուր թե տալիս.  
- Տո՛, կոպի՛տ արջ, տո՛, վայրենի՛,  
Էս տեսակ էլ բա՞ն կլինի.  
Դու առուտուր եկար անես,  
Ձե՞ն իր շեմքում մարդ սպանես...

Մին ասում են՝ տասը զարկում,  
Աղցան անում, մեջտեղ ձգում  
Իր շան կողքին երկար ու մեկ:  
- Դե ձեր մեռելն եկեք տարեք:  
Ու էստեղից բոթը գնում,  
Գնում մոտիկ գյուղն է հասնում.

Հե՛յ, օգնեցի՛ք,  
Սեռած իռ շե՞ք,  
Սպանեցին մեր գյուղացուն...

Ինչպես շնաճանձի մի բուն  
Քանդես, թողնես՝  
Էն ճանձի պես  
Ամբողջ գյուղով օրդու կապում,  
«Բո՞ւհ» են անում, դուրս են թափում՝  
Ամեն մինը առած մի բան.  
Որը ձեռին մի հրացան,  
Որը եղան, ցարատ կամ սուր,  
Որը թի, բահ, որը շամփուր,  
Որը կացնով, որը փետով,  
Որը ձիով, որը ոտով,  
Որն անգդակ, որը բորիկ՝  
Դեպի դուշման գյուղը մոտիկ:  
- Տո՛, էսպես էլ անիրավ գյո՞ւղ,  
Ո՛չ խիղճ ունեն, ո՛չ ահ-երկյուղ.

Մարդ գնում է առուտուրի,  
 Հավաքում են, բաշում սրի:  
 Ձո՞ւ ձեր գեղին, միջի մարդին,  
 Ձեր նամուսին, ձեր աղաթին...  
 Գնա՛նք, զարկե՛նք,  
 Զարդե՛նք, կրակե՛նք...  
 - Հա՛յ, հո՛յ, հառա՛ջ, դե ձեզ տեսնե՛մ...  
 Ու դուրս եկան իրարու դեմ.  
 Հա՛ զարկեցին ու զարկեցին:  
 Կոտորեցին, կրակեցին,  
 Ինչքան ավել կոտորեցին՝  
 Ենքան ավել կատաղեցին,  
 Զարդեցին իրար,  
 Չնշեցին իրար,  
 Կորան գնացին  
 Գետնին հավասար:  
 Դու մի՛ ասիլ, մեկը մեկից  
 Եսքան մոտիկ, սահմանակից  
 Էս գյուղերը հարկ են տալի  
 Ամեն մինը մի արքայի:  
 Մի տերության թագավորը,  
 Երբ լսում է էս բոլորը,  
 Արձակում է իրովարտակ  
 Ժողովրդին իր հպատակ.  
 - Հայտնի լինի մեր տերության  
 Զինվոր, բանվոր, ազնվական՝  
     Ամեն շարքին  
     Ու աշխարհին,  
 Որ անօրեն ու դավաճան  
 Մեր դրացի ազգը դաժան,  
 Երբ մենք քնած էինք սիրով,  
 Մեր սահմանը մտավ զոռով  
 Ու կոտորեց սուրը ձեռին  
 Մեր սիրելի զավակներին:  
 Արդ սրահար ու իրակեզ  
 Մեր որդիքը կանչում են մեզ,  
 Եվ մենք, ընդդեմ մեր իսկ կամքին,  
 Պատվեր տվինք մեր բանակին,  
 Թնդանոթով մեր ավերող  
 Ու Աստուծով մեծակարող,  
 Հանուն արդար ու նուրբ ոխի  
 Մտնի հողը մեր ոսոխի:  
  
 Մյուսը նույնպես իրեն հերթին  
 Գրեց զորքին, ժողվրդին.  
 - Մարդկանց առաջ ու Աստըծու,  
 Բողոքում ենք մեր դրացու  
 Վարմունքի դեմ և՛ չար, և՛ նենգ,  
 Որ ոտքելով ամեն օրենք՝

Մյուսը նույնպես իրեն հերթին  
 Գրեց զորքին, ժողվրդին.  
 - Մարդկանց առաջ ու Աստըծու,  
 Բողոքում ենք մեր դրացու  
 Վարմունքի դեմ և՛ չար, և՛ նենգ,  
 Որ ոտքելով ամեն օրենք՝

Բորբոքում է կռիվ ու վեճ  
 Հին հարեան ազգերի մեջ,  
 Քանդում սիրո դաշը կապած:  
 Արդ՝ ակամա մենք ստիպված,  
 Հանուն պատվի, արդարության,  
 Հանուն թափված անմեղ արյան,  
 Հանուն ազատ մեր աշխարհի,  
 Հանուն Աստծու և իր փառի -  
 Բարձրացնում ենք մեր ձայնն ահա  
 Ու մեր սուրբ նորա վրա:

Ու սկսեց կռիվն ահեղ:  
 Շոխնդ, որոտ էստեղ, էնտեղ:  
 Կրակն ընկավ շեն ու քաղաք,  
 Արյուն, ավեր, ճիչ, աղաղակ,  
 Ամեն կողմից սարսափ ու բոթ,  
 Ամեն կողմից մեռելի հոտ...  
 Ամառ, ձմեռ,  
 Ողջ տարիներ  
 Մշակն անքան,  
 Դաշտերն անցան,  
 Ու կռիվը չդադարած՝  
 Սովոր եկավ համատարած:  
 Սովոր եկավ, սովի հետ ցավ,  
 Ծաղկած երկիրն ամայացավ...  
 Իսկ մնացած մարդիկ իրար  
 Հարցնում էին սարսափահար,  
 Թե որտեղից արդյոր ծագեց  
 Ես ընդհանուր աղետը մեծ:


բոթ	- դժբախտ, վատ լուր
օրդու կապել	- զորք կապել, զորք կապմել
նամուս	- պատիվ
ադաթ	- սովորություն, ավանդույթ, ընդունված կարգ
հրովարտակ	- հրաման, թագավորագիր, թագավորական դիմում
դրացի	- հարեան
արդ	- հիմա
սրահար	- սրով խփված
հրակեց	- կրակով այրված
ոտքել	- ոտնահարել, արհամարհել, բանի տեղ չդնել
դաշ(ն)	- դաշինք, պայման
համատարած	- ամեն տեղ տարածված
ամայանալ	- դատարկվել, չորանալ, անմարդարնակ դառնալ
ցարտ	- լայն, դանակի նման գործիք՝ ճյուղեր կտրատելու համար
ասլան	- առյուծ
դուշման	- թշնամի, ոսոխ
նենգ	- չար, խարդախ բնավորություն ունեցող
շոխնդ	- ուժեղ աղմուկ, թնդյուն, դդրդյուն
անցան	- առանց ցանելու

# ԾՆԾՌՈՒԿԸ

Հայ ժողովրդական հերիած

Լինում է, չի լինում, որ չի լինում, ո՞նց է լինում: Ուրեմն, լինում է մի ծիտ: Սա մի ծառի վրա բույն է շինում, ձագ է հանում ու ապրում է իր համար: Ամեն օր կեր է ճարում, համ ինքն է ուտում, համ էլ ճտերին բաժին հանում:

Օրերից մի օր էլ էս ծիտը տանը չի լինում, մեծ ճուտը փոքրին ասում է. «Արի թեզ թռչել սովորեցնեմ»: Բնից դուրս է զալիս, մի երկու քայլ է անում, պուճուրն էլ հետեւից մի քիչ առաջ է գնում: Մեծն անցնում է մյուս ճյուղին: Էս պուճուրն էլ կրնկակոխ գնում է: Բայց արի ու տես, որ էս պուճուրի խելքին փշում է իր գլխու քաներ անել. «Ես էստեղ մնացողը չեմ, թռչեմ, գնամ աշխարհ ման գամ»: Ճուտ դու ճուտ, ասելն ու թռչելը մեկ է լինում: Բայց ո՞ւր, իսկի թռչել չգիտի. ընկնում է ուղիղ ծառի տակի



ցեխի մեջ: Մի կերպ ցեխից դուրս է զալիս: Կողքին մի տերն է լինում: Էս ծիտը թե՝

- Տերե՛, այ տերն, ի՞նչ կլինի, ինձ սրբս: Էս տերեւը թե՝

- Ե՛Ե՛հ, չէ մի չէ...

Էս ծտի գլխի որդերը շարժվում են.

- Հագ, տես ես քո գլխին ի՞նչ օյին խաղամ, - ասում է ու թռչում գնում: Կողքի արտում մի չալպուտուրիկ այծ է լինում:

Էս այծին թե՝

- Այծ ախաքեր, ի՞նչ կլինի՝ զաս էս տերեխին ուտես. ինձ չի մարրում, որ թռչեմ գնամ, բնումս կենամ:

Էս այծը թե՝

- Մըկրեր, ես էս կանաչ արտը թողնեմ, զամ քո չոր տերե՞ն ուտեմ, և դ իմ գործը չի, թող գնա:

Էս ծտի ճուտը թռչում է գնում, գնում է տեսնում սարում մի հովիվ,

մոտենում է թե՝

- Այ հովիվ, եկ գնանք, էն արտի այծին կեր, որ տերեսին չի ուտում, տերեն էլ ինձ չի մարրում՝ թռչեմ գնամ, բնումս կենամ:

Հովիվը թե՝

- Պա՛հ, ա՛յ ծտի ճուտ, ես իմ դմակավոր գառները թողնեմ, զամ քո պու-  
ճուր ա՞յծը ուտեմ:

Ես ճուտն էլ թե՝

- Դե լա՛վ, կտեսնես:

Ու թռչում գնում է:

Գնում է, գնում, մի գյուղում մի հարսանիքի է հանդիպում: Հարսանիք, ի՞նչ հարսանիք, էլ դու սուս: Զուրնաշին ու դիոլչին եռ չեն ածում, եռ չեն ածում, սարերը դմբդմբում են: Մի կերպ գնում է դիոլչու ականջին ասում.

- Այ դիոլչի, ի՞նչ կլինի զամ, էն սարում մի հովիվ կա, դիոլիդ ձայնով զժվացնես նրան, որ այծին չի ուտում, այծն էլ տերեսին չի ուտում, տերեն էլ ինձ չի մարրում՝ թռչեմ գնամ, բնումս կենամ:

Ես մարդը թե՝

- Այ ծիտ, ես իմ հարսանիքը թողնողը չեմ, սարի հովիվ ենտ էլ գլուխ դնողը չեմ:

Ծիտը ճարը կտրած թռչում գնում է: Գնում է, տան պատի տակ մի մուկ է տեսնում.

- Մո՛ւկ, ա՛յ մուկ, գնանք դիոլչու դիոլը ծակի, որ չի գնում հովիվին զժվացնի, հովիվն էլ այծին չի ուտում, այծն էլ տերեսին չի ուտում, տերեն էլ ինձ չի մարրում՝ թռչեմ գնամ, բնումս կենամ:

Ես մուկն էլ ոչ մեկ, ոչ երկուս, ետ է դառնում, թե՝

- Այ ծտի ճուտ, կորի գնա, է՛, ես էս զաթեն ու աղանձը չեմ թողնի զամ քո չոր դիոլը ծակեմ:

Ծիտի ճուտը թռչում է գնում: Մի տուն է գնում, տեսնում աչքի մեկը կույր մի պառավ թախտին նստած, մի գավազան էլ կողքին: Կույր աչքի կողմը կա-  
թռով աման կա դրած, մի կատու էլ վառարանի մոտ քնած է: Դու մի ասի, ես կատուն ամեն անգամ պառավից թարուն կաթն ուտում է, բեղերը լիզում, մի կողմ քաշվում: Ես ծիտը կատվի ականջի տակ փսփսում է.

- Փիսի՛կ, փիսի՛կ:

- Մյառ՛, ի՞նչ...

- Արի գնանք էն մկանը կեր, որ չի զալիս դիոլը ծակի, դիոլչին չի զալիս հովիվին զժվացնի, հովիվն էլ այծին չի ուտում, այծն էլ տերեսին չի ուտում, տերեն էլ ինձ չի մարրում՝ թռչեմ գնամ, բնումս կենամ:

Ես կատուն թե՝

- Այ ծիտ, ծտի՛ ճուտ, ես էս կաթ ու մածունը թողնողը չեմ, զամ քո հարամ մուկն ուտեմ:

- Դե լա՛վ, - ասում է ծիտն ու գնում է պառավին գանգատվում. - նանի՛, ա՛յ նանի, ես կատվին մի լավ դնաստի, քո կաթն ու մածունը նա է ուտում, զո՞ղ է, զո՞ղ:

Պառավը զավազանը տանում է բերում տուր թե կտաս կատվին: Կատուն տեղից պոկվում է, զագ տալիս՝ մկանն ուտի, մուկն էլ վազում է՝ դիոլը ծակի, դիոլչին վազում է՝ հովիվին զժվացնի, հովիվը վազում է՝ այծին ուտի, այծը վազում է՝ տերեսին ուտի, տերեն էլ դողդողալով ծտին սրբում է, մի լավ մար-  
րում:

Ծիտն ուրախացած թռչում է իր բույնը, կանգնում ճյուղին ու երգում.

Ծիտն եմ, ծիտն եմ,  
 Ծտի ճուտն եմ:  
 Մոր բերած եմ:  
 Հոր պահած եմ:  
 Ասուշ քրոջ թույրած եմ,  
 Ծի՛վ, ծի՛վ, ծի՛վ...

բաժին հանել  
 կրնկակոխ  
 գլխի որդերը շարժվել  
 դմակ  
 դմակավոր  
 ածել  
 դմբդմբալ  
 աղանձ  
 զավազան  
 դնօստել  
 կենալ

- իր բաժնից ուրիշին տալ
- ետևից ընկած, հետքով
- խիստ բարկանալ
- ոչխարի ետևի ճարպոտ մասը
- դմակ ունեցող, չաղլիկ. ճարպոտ
- նվագել
- թնդալ, աղմուկ հանել, դմբոց հանել
- բոված ցորեն
- ձեռքի հաստ փայտ
- ծեծել
- մնալ, ապրել

*Ե՞րբ են մարդու գլխի որդերը շարժվում:*

---



---

*Ո՞ւմ հետ կամ ե՞րբ չես սիրում գլուխ դնել, ինչո՞ւ:*

---



---

*Ո՞ւմ ես բաժին հանում քո ունեցածից:*

---



---

*Որեւէ մեկին դնօստե՞լ ես, եթե այս՝ ինչո՞ւ:*

---



---

*Իսկ քեզ դնօստե՞լ են, եթե այս՝ ինչո՞ւ:*

---



---

Հերիաթը համարուտ պատմի՛ր սկզբից մինչև այնտեղ, որ ծիտը դիմում է հովվին:

---

---

---

---

---

---

---

Կարո՞ղ ես ճիշտ դասավորել բառերը.

այ ծիտ թողնողը չեմ հարսանիքը ևս իմ հովվի սարի հետ էլ չեմ գլուխ դնողը

---

---

---

Ի՞նչ էր ասում պառավը կատվին | Ծեծելիս:

---

---

---

Իսկ կատո՞ւ:

---

---


---

# ԱՐԵՎ

Ամեն օր Արեք դուրս է գալիս, ու լույսը բացվում է, իսկ երբ մայր է մտնում, օքք մքնում է: Իրականում մեր երկրագունդը պտտվում է Արեի շուրջը, և Արեգակն է լուսավորում Երկիրը: Արեք նաև տարություն է տալիս մեզ: Այն շիկացած գունդ է. նրա վրա ամեն ինչ հալված եռում է: Եթե Արեգակը չի նի, Երկրի վրա ամեն ինչ կառչի: Ե'վ բույսերը, և՛ կենդանիները, և՛ մարդիկ չեն կարողանա ապրել առանց լույսի և ջերմության, ինչպես և՛ առանց օդի:

Ուրեմն առանց Արեի Երկրի վրա չի կարող կյանք լինել:

Երբ մեզ մոտ մութ է, Արեգակը երկրագնդի հակառակ կողմն է լուսավորում: Բայց այդ ժամանակ իր լույսը տալիս է Լուսնին, Լուսինն էլ փոխանցում (անդրադարձնում) է մեզ, և գիշերը սարսափելի խավար չի լինում:



## ԼՈՒՍԻՆ

Երկնքում Արեն ու Լուսինը նույն մեծության են թվում:

Բայց չէ՞ որ ամեն ինչ հեռավորությունից է կախված (հեռվում սավառնող մեծ ինքնաթիռը մեզ ավելի փոքրիկ է թվում, քան մեր կողքին նստած թռչնակը):

Արեք մեզանից շատ ավելի հեռու է, քան Լուսինը: Դրա փոխարեն այն ավելի մեծ է Լուսինից:

Լուսինի մակերեսույթը տիսուր տեսք ունի: Այն շատ մուգ գույնի է և ծածկված է մեծ ու փոքր փոսերով: Լուսինի վրա նաև լեռներ կան: Փոսերը մեզ երևում են մուգ կետերի տեսքով: Լեռներն ել սրագագաթ չեն, մի տեսակ կլոր տեսք ունեն:

Լուսինի վրա ո՛չ օդ կա, ո՛չ ջուր: Պարզ է, որ այնտեղ կյանք չի կարող լինել:

Լուսինն իր լույսը չունի. այն ընդամենը դուխանցում, անդրադարձնում է արեի՝ իր վրա ընկած լույսը:

սավառնել - թռչել

Եթք Արևը մայր է մտնում, երկինքը մթնում է, և այնտեղ հայտնվում են աստղերը: Դրանք անթիվ-անհամար են: Այնքան շատ, որ ինչքան էլ ուզենանք, չենք կարողանա հաշվել: Դա միայն գիտնականները կարող են անել: Բայց գիտե՞ք, որ իրականում աստղերն էլ Արևի նման մեծ են, Արևի նման պայծառ ու տաք: Այսինքն՝ նրանք բոլորն էլ երեղեն վիթխարի գնդեր են, ինչպես Արևը: Բայց աստղերը մեզանից միլիոն անգամ ավելի հեռու են, քան Արևը: Իսկ մեզ մոտիկ, սեղանին դրված մոմի լույսն ավելի պայծառ է երեսում, քան հեռվում գտնվող մերենայի կամ խարույկի պայծառ լույսը:

Այդ է պատճառը, որ աստղերը մութ երկնքում ընդամենք թույլ լույս արձակող կետեր են թվում:

Վիթխարի - շատ մեծ, իսկա



## ԲՆՈՒԹՅԱՆ ՇԱՏԱԿԵՐՆԵՐԸ

... Բնությունն ամեն մեկին տվել է իր ուտելու չափը, սակայն կան կենդանիներ, որոնց ուտելու չափը մեզ զարմացնում է:

Մենք բոլորս էլ ծանոթ ենք ծիծեռնակին: Այն նշանավոր շատակեր է: Կարո՞ղ եք երևակայել, որ նա մի օրում երեսուն հազար ճանձ ու մժեղ է ուտում:

«Ձագավորական» անունով մի թռչուն էլ կա, ճնճղուկի չափ է, իր շատակերությամբ ծիծեռնակից ետ չի մնում:

Սարյակը, որ անուշ-անուշ երգում է, միանգամից մեծ քանակությամբ վնասակար միջատներ է ոչնչացնում: Հազար սարյակ իրենց ձագերի հետ միասին մեկ ամսում ուտում են քաշներկու տակառաչափ միջատ:

Բուն՝ գիշերային թռչունը, վատ համբավ ունի իր անախորժ ձայնի պատճառով: Բայց օգտակար թռչուն է, որովհետև ամռան ամիսներին արտերը մարրում է մկներից և այլ վնասակար կրծող կենդանիներից:

Հաշված է. եթե մարդը թռչունի ախորժակ ունենար, մեկ օրում պիտի ուտեր այնքան, որքան ուտում է մեկ ամսվա ընթացքում:

անախորժ - տիաձ, ոչ հաձելի, անդուր

## ԶՄՈԱՆԸ ՔՆՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Կան կենդանիներ, որոնք ցրտերն ընկնելիս քաշվում են իրենց քներն ու ծակերը և խոր քուն մտնում:

Այսպես, խլուրդն իր շինած երկար անցրով իշնում է ներքն, հողի մեջ, մինչև իր բույնը: Անցրը ներսից մի լավ փակում է, որ ցուրտը ներս չմտնի, և քնում տերեներից պատրաստված իր անկողնում:

Մկնարջը կծկում է մի ծառի խոռոչում ու քնում, բայց մինչև քնելը կաղին և ընկույզ է հավաքում իր քնում: Երբ արթնանա, մի քիչ կուտի և նորից կրնի:

Մողեսն էլ ձմեռն անցկացնում է քարի կամ պատի անցքի մեջ քնելով:

Արջը, կրիան և մի քանի այլ կենդանիներ նույնպես ձմռանը քնում են:

Այս բոլոր կենդանիները կարթնանան, երբ գարունը իր տարուկ շունչը փչի:

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Խ

Թոշունի մտածմունքը Հովհաննես Թումանյան .....	3
Շաշ հյուրը Հայ ժողովրդական հերիաթ .....	7
Խմած մկան պայմանը Հայ ժողովրդական հերիաթ .....	9
Էջի ձուն Հայ ժողովրդական հերիաթ .....	13
Կույրերի կարծիքը Հովհաննես Թումանյան .....	17
Աշուն Համո Սահյան .....	19
Հինգի արկածները Զանիր Ռոդարի .....	21
Խուլի այծերը Աթարեկ Խնկոյան .....	25
Հայր Բոնամիի հերիաթը Ֆրանսիական ժողովրդական հերիաթ .....	29
Ազռավն ու աղվեսը Աթարեկ Խնկոյան .....	33
Չղջիկ Արուսյակ Սահակյան .....	37
Չախորդ Փանոսի հերիաթը Հովհաննես Թումանյան .....	41
Անխելը մարդը Հովհաննես Թումանյան .....	47
Մկների ժողովը Աթարեկ Խնկոյան .....	51
Ճանապարհորդություն	
Դեպի լուսին Ֆրանսիական ժողովրդական հերիաթ .....	55
Գորգի տակ Դոնալդ Բիթեթ .....	61
Աղվեսը Հովհաննես Թումանյան .....	65
Մի կարիլ մեղը Հովհաննես Թումանյան .....	69
Ճնճղուկը Հայ ժողովրդական հերիաթ .....	75
Արև .....	79
Լուսին ..	79
Աստղեր ..	80
Բնության շատակերները .....	81
Զմռանը քնող կենդանիները .....	81